

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/21

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ «ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Դիմումատուն հայտնում է, որ «ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» արտադրական կոոպերատիվը 2018 թվականի հունվարի 12-ից գործունեությունը վերսկսել է, սակայն հունվարի 15-ից գործունեությունը նորից դադարեցրել է և 2018 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

«ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» արտադրական կոոպերատիվը վերակազմավորվել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, որի պետական գրանցումը կատարվել է 2018 թվականի մայիսի 5-ին, իսկ ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսել է 2018 թվականի մայիսի 10-ից: Ըստ դիմումատուի՝ հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 267 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և բավարարելով նույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված պայմանները՝ «ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ն կարող է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, սակայն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը ներկայացնելիս համակարգը բերում է հետևյալ հաղորդագրությունը՝ «Հայտարարությունն ընդունվել չի կարող, տվյալ տարվա համար արդեն կա ԱԱՀ-ի կամ շրջանառության հարկի հայտարարություն»:

«ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ն խնդրում է տալ հնարավորություն սահմանված կարգով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու համար:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» արտադրական կոդպերատիվը 2018 թվականի հունվարի 12-ից վերսկսել է գործունեությունը, սակայն հունվարի 15-ից գործունեությունը նորից դադարեցրել է: 2018 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

«ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» արտադրական կոդպերատիվը վերակազմավորվել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, որի պետական գրանցումը կատարվել է 2018 թվականի մայիսի 5-ին, իսկ ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսել է 2018 թվականի մայիսի 10-ից:

«ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ ընկերություն) Օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ՀՀ ԿԱ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով փորձել է ներկայացնել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, սակայն համակարգի կողմից չի ընդունվել:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր: Նույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձ-

նացումը, վերակազմավորումը) կատարվում է նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշման հիման վրա, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից: Օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ մեկ տեսակի իրավաբանական անձի մեկ այլ տեսակի իրավաբանական անձի վերակազմավորվելու դեպքում (կազմակերպական-իրավական ձևի փոփոխում) վերակազմավորված իրավաբանական անձի իրավունքները և պարտականությունները անցնում են նոր առաջացած իրավաբանական անձին:

Քննարկվող դեպքում Ընկերությունը, հանդիսանալով «ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» արտադրական կոոպերատիվի իրավահաջորդը, պետական գրանցման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր: Սակայն հարկ է նշել նաև, որ հարկային տարվա ընթացքում՝ 2018 թվականի փետրվարի 15-ին Ընկերությունը ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և համարվում է շրջանառության հարկ վճարող: Հետևաբար, ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված բացառության կարգով չի կարող համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ «ԳԱՐԻԿ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ